

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՎԱՃՄԱՌԱԿԱՆՈՒԹԵԱՆ

Ի ՄԻԶԻՆ ԴԱՐՍ



գուտկարդի գրապետևեղիտ
նական Պրօֆէսօր Գուլիէլմ
Հայտի այս նշանաւոր եր-
կասիրութիւնն , զոր Արևե-
լիան - Լատին - Ընկերու-
թեան համար դրեց , արդէն իսկ տարի-
ներով առաջը տեսած էր . բայց յա-
մին 1885-6 Լայրցիկի վերջին տպա-
գրութեան համբաւը մեծապէս հնչեց
բովանդակ եւրոպիոյ և այլոց աշխար-
հաց զիտնական շրջանին մէջ , իրքեւ մի
նոր երկասիրութիւն բազում՝ ձրիւք
կատարեալ : Իւստի ուսումնասիրաց ըն-
կերութիւնք փութացին մեծաւ ծափա-
հարութեամբ և հրաւիրեցին լինել ին-
քեանց կանառակից . հմտագոյնքն ան-
գամ յետ աշալուրջ քննութեան՝ մե-
ծի կարևորութեան և դրուատեաց ար-
ժանաւոր գործ մի լինել վճռեցին : Բաց
աստի գոյր և այլ իմն պատճառ կա-
րեսոր և յորդորիչ նուիրել այս յօ-
դուածս այդ մեծանուն հեղինակին և
իւր չքնաղ երկասիրութեան , ծանօ-
թացընելով զայն աղջիս . այսինքն են
նորագոյն և օգտաշատ տեղեկութիւնք՝
զորս 'ի մէջ այլոց , ընծայէ մեզ հեղի-
նակս՝ Հայաստանի և Հայաստանեաց
հին վաճառականութեան , պատմու-
թեան և աշխարհագրութեան մասին :
Այս վերջին տեսութեամբս ես ուղղա-
կի կը ցանկայի հետաքրքրութիւն և հե-
տաքրքրել զայլու . բայց որպէս զի այդ
կարեսոր գործոյն զէթ ստուերագիր մի
գծեմ և հրաւիրեմ զմերայինս յընթեր-
ցումն նորին , պատշաճ համարեցաց
նախ ընդհանուր հայեացք մի տալ ա-
նոր վրայ :

Գրուածն կը բաղկանայ երկու մեծ
հատորներէ քառամածալ , մաքուր , զիւր .
ընթեռնըլի տպագրութիւն 'ի գաղղիա .
ըէն բարբառ : Առաջին հատորն՝ երկու
պարբերութեանց և ժամանակի բաժ .
նուած է : Ա . Պարբերութիւնն կը սկսի
'ի մեծամեծ արշաւանաց՝ ցխաշակիրս ,
և իւր մէջ կը բովանդակէ Յուստինիա .
նոս կայսեր և իւր յաջորդաց ժամանա .
կամիջոցն , իսլամի երեննալէն ցսկիզբն
Խաչակրաց — Արաբացիք և անոնց եր-
կրին վաճառաշուկու ուղիներն — Յոյնք —
Խուսիա և Սկանավինաւիա — Ցուրնառառ
ընդ Արաբացիս և ընդ Բիւզանդիոն —
Գերմանիա — Գաղղիա — Խաւալիա և
Հրեայք : — իսկ Բ . Պարբերութիւնը
կը սկսի Սրեելից վաճառականութեան
զարգացմամբն , և կը բովանդակէ՝
տուրեւառուկ գաղթականաց հաստա-
տութիւնն յըլլենելս — Ասորիքի Խաչա-
կրաց վիճակներն՝ իւրեանց հաստա-
տութեան առաջին դարուն մէջ — Խա-
չակրաց վիճակաց մէջ եղած վաճառա-
կան գաղթականութիւնները — Խաչա-
կրաց վիճակներն՝ Սրեելից վաճառա-
կանութեան տեսակիտովը նկատեալ
— Բիւզանդիոն՝ կոմմենեանց և Ան-
գելեանց հարստութեան ժամանակ —
Լատին աէրութիւնք — Ասորիքի Խա-
չակրաց վիճակներն իրենց հաստատու-
թեան Բ գարուն մէջ — Կիպրոս կը դ-
զին՝ Խաչակրաց վիճակներէն առաջ ու-
նեցած գրութեամբ նկատեալ — Փոքր
Հայք՝ իրենց մերձաւոր և բարեկամա-
կան յարաբերութեամբք ընդ վիճակս
Խաչակրաց — Մահմէտական Ասորիք՝
Խաչակրաց վիճակներէն վերջ ունեցած

կացութեամբը նկատուած — եղիպ-
տոս — Արևելից վաճառականութեան
զարդացումն՝ ասիսական աշխարհաց
թոյլուութեամբը՝ ձի՝ ձի դարուն
վերջը — Արևելից մերձաւորագոյն ըն-
թացք վաճառականութեան — բուլ-
զարիա և Փոքր Ասիս Տաճկաց :

Երկրորդ հատորն ես երկու պար-
բերութեան ժամանակի բաժնուած է :
Առաջինը կը պարունակէ . Արևելից վա-
ճառականութեան զարդացումը ասիս-
ական կողմանց թոյլուութեամբն — Ա-
րևելից վաճառականութեան նախկին
ընթացքն՝ ի Միջերկրեայս — Կիպրոս —
Եգիպտոս և Աստրիք — Բացումն նո-
րանոր գծերու՝ ի ձեռն թաթարաց —
Մոնղոլ թաթարաց երևումն — Փոքր
Հայք՝ իրբն Նախագուռն կեդրոնական
Ասիս — Պարսկաստան — Հնդկաս-
տան — Պոնտոսի հիւսիսակողման գաղ-
թականութիւնը — կեդրոնական Ա-
սիս և Զինաստան : Խակ Բ. Պարբերու-
թիւնն Միջերկրեայց վաճառաշահ աղ-
գաց անկմամբն կը սկսի , յորում Ա-
սիս ներքին և արտօքին ճանապարհ-
ները կը գոցուին և Փորդուգալցւոց
ձեռքով նոր ուղի մը կը բացուի . կը
բովանդակէ Պալքանեան թերակրդ-
գոյն Օսմանցի , Յոյն և Փրանկ ազգա-
բնակութիւնքը — Փոքր Ասիս Տաճկաց
— Տրապիզոնի թագաւորութեան վեր-
ջի տարիները — Պոնտոսի հիւսիսա-
կողման գաղթականութեանց վերջը —
Կիպրոս , Եգիպտոս և Ասորիք — Հընդ-
կաստան — կեդրոնական Ասիս , Զի-
նաստան և Պարսկաստան — Վերջին
երկու արկածներն և Բորդուգալցւոց՝ ի
Հնդկաստան մտնելն և Օսմանցւոց Ե-
գիպտոսի աիրաբանտելը :

Յաւելուած մի ևս կայ՝ ի վերջկոյս
Բ. հտ. որ այս ամենակարենոր իրաց
վրայ կը խօսի , այսինքն են Արևելից և
Արևմտից մէջ փոխանակելի վաճառք —
Գերիք — Բնածին և արուեստական բերք
— Յաճախորդութիւնտուրեառութեան
Արևելից — Ցանկ մի յատուկ և հասա-
րակ անուանց ամենայն իրաց՝ որք այն
երկասիրութեան մէջ կը պարունակին :

Բոլոր այս նիւթերս , զոր ես հարկան-
ցի յիշատակեցի , Կորովամիտ հեղինա-
կը խորին և ընդարձակ տեսութեամբք
հետագօտած է . լրջօրէն ուսումնասի-
րած է դարուց և ժամանակաց տուր-
եւառութեան շարժմունքը , նաւար-
կութեան կազմակերպութիւնը , ցամա-
քային և ծովայած գծերու նրբաշաւիդ
ցանցերը , վաճառատանց , մաքսատանց
և հարկաց եղանակն և օրէնքները :
Արդ , որչափ որ միջնադարեան վաճա-
ռականութեան և վաճառուց վրայ ու-
նեցած ծանօթութիւննիս սակաւ է և
միջին , այնչափ և նա իւր լուսաւոր
հանճարով պայծառ նկատեր է և պար-
զեր իրմէ առաջ եղած ազգաց թեր-
թերը . իմաստասիրած է անոնց պատ-
մութիւնն և աշխարհագրութիւնն , ա-
ւանդութիւնն և զսովորոյթս . մանր զբն-
նելով արքունի գիւտաններն և մասե-
նադարաններն՝ անբաւ նիւթեր ՚ի լոյս
բերած է ՚ի խաւարէ : Զէ մարթ մի
առ մի յիշել այն ամենազգի անուշա-
հոտ և իննկարոյր նիւթերը , ներկերն
և թշշկական բայսերը՝ զորս ածէին յԱ-
րենելից յԱրևելուս . բայց աւելի քան
զայս հետաքրքրական են մեզ նախկին
ճարտարարուեստից արտազրութեանց
վրայ տուած տեղեկութիւնքը : Հին վա-
ճառաշառ գծերը՝ նորոց հետ բաղդա-
տելով , և նորանոր հանգուցից և տե-
ղեաց յայտնութեամբ աստի և անտի
ազգի ազգի յարաբերութեանց զօդի՝
զեւրով ընդ Ասիս կը կապէ , գոտցես
իմն ՚ի լուսատիպ պատկերի՝ այնպէս
կը կենդանագրէ զանոնք ընդերցողաց
առաջի : Արդ ինչպէս կենդանագրի վը-
րայ նայող ոք կը թուի զնոյն ինքն տես-
նել զկենդանի անձնաւորութիւնն , այս
պէս ևս կրնամ ըսել այս զրուածս ըն-
թերցած ժամանակ , կարծէք թէ իրաք
այնքան բազմահոլով դարուց և ժամա-
նակաց բացակայութենէ ձայն տալով՝
գան և անցանեն զինի միմիանց ազգք
և ազինք , իրենց յատուկ տարազուք և
երանգով . աստի կարաւանք և ուղա-
երամակք երկայնաշար կ'ընթանան՝ ի
ցամաքի , և անտի նաւք պարզելով ի-

րենց գոգալիքը առագաստները կը վարդին 'ի ծով և 'ի գետո։ Մէկ կողմէն զէնք և զինուորութիւնք ահեղ բանակաց, և գունդագունդ արշաւանք բարբարոս ժողովրդոց՝ պատերազմաց և արեան գետեր կը վազցընեն, լի աղէտիք և աւերածովք, իսկ միւս կողմէն ճարտարութիւնն, յամընթաց քաղաքականութիւնն և քրիստոնէութիւնն անոնց աւերակացը վրայ նոր կեանք կը ծնանին և նորանոր քաղաքներ կը կանդնեն։ Արշաւանք թափթարաց, թրըքաց, Արարացւոց և Յամանցւոց, քաղաքային վարչութիւնն արեւելեան և արեմտեայ պետութեանց, խաչակիր զօրաց զիմեցմունք և կրօնք՝ հրաշալի կերպով կու գան 'ի հանդէս յերկասիրութեան աստ Պ. Հայոտի, և իրենց զօրեղ աղդեցութեամբը կը խօսին և կը գործեն Արեւելից վաճառականութեան վրայ, Ռւրախակից կը լինիմ դիտնական հեղինակին՝ զի քաջիկ յաջողած է և իւր նպատակին հասած. իւրաքանչիւր ազգ և ժողովուրդ ունի աստ իւր սեփական մասը։ Հետզիւտէ կ'ելնեն կը կանդնին Տրապիզոնի, Փոքուն Հայոց, կիպրոսի, Անտիոքաց և Երուսաղեմի թագւարութիւնները և դարձեալ կը խոնարհին 'ի զրորմտն և յանկումն։ Հանրապետութիւնք վենեսելկոյ, Գենուայի, Բիզոյի, Փլորենտիոյ և այլն, իրենց նորախայիծ զօրութեամբն և իմաստուն վարչութեամբը դողցես իմն զաշն կռելով ընդ Պոսիդոնի՝ իրենց ծովայած տորմիզներով կը տարածուին կը բռնեն թաթարաստանի և Ղրիմեան թերակղզոյն խորերը։ Ցամաքի վրայ բացուած կը տեսնուին մերթ մանուածապատ և մերթ շիտակ ճանապարհներ, որք 'ի Տրապիզոնէ կը ձգուին մինչև 'ի Հնդիկս. շահավաճառ մարդկութիւնն ընկերութեանց բաժնուած՝ կը շահատակի ընդ ծով և ընդ ցամաք՝ բիւր արկածիք բաղդին. անտուստ կը տանին և կը բերեն արեւելեան և արեմտեայ աշխարհաց բազմադանձ վահառքը, որով կը ճոխանան նաև քաղաքը եւրոպայ և հոյակապ ապարան.

ներ և գմբէթք 'ի վեր կը բարձրանան, Ողին իսկ աննկուն Ովկիանու և մըրը, կաց՝ որ սպառնայր Գամուէնսի կլանել զամենայն, հուսկ ուրեմն կը խոնարհի կը նուածնի ընդ իշխանութեամբ լուսիտանացւոց և Սպանիացւոց. Դլուխնբարեյուսոյ և անծայրածիր պարփակք Զինաստանի՝ կը բացուին և կը գոցուին առաջի բազմամբուխ վաճառականաց, ոչ միայն կորսուական գանձուց երկրի, այլ և բանին կենաց և անզին մարգարտին. և ոսկոյ, արծաթի և պատուական ականց հետ՝ կը վայլին նաև լուսափայլ հանճարներ, Մարկոյ-Բոլոց, Մարդին-Սանուտոյ, Բեկուդդի, Լանճելէ և այլ ճանապարհորդք, ասիսական աշխարհաց վրայ անհատնելի դիտութեան բովեր կը բանան հետագայից, և աւանդութիւնս ազգաց կը մատակարարեն։ Լէոնարտոյ-տա-Վինչիի պէս եզական մըտքեր, իրենց կրակոտ և ճուխ երևան կայութեան թերուուն վրայ յեցած կ'ել ըն կը բարձրանան ցաւրոսի ամպա. խաղաց բարձրութեանց վրայ և մերթ Կ'ինչեն կը խորասուզին կիլիկիոյ անմատոյց գարանձաւաց մէջ, իւրեանց արուեստին և հանճարոյն հրաշակերտքըն անմահացնելու համար։ Միովլ բանեւ, բազմահմուտ հեղինակն՝ իւր այս գրուածով ուզած է ժամանակին քառահորդ անւոյն վրայէն դարեր և ժամանակներ առջենէս անցընել՝ իրենց գաղաքային, կրօնական, տնտեսական, պատմական և աշխարհազրական յեղափոխութեամբք. յորում մարդկութիւնն՝ ի կանգնել իւրում և յանկանել միշտ յաղթական կը հանդիսանայ։ Ուրֆան գաղտնիք, քանի յիշատակարանք և որպիսի հնութեան գանձեր, որք ցարդ յանճանօթս կայլին, նա քննելով և ստուգելով 'ի վեր հանած է. քանի քանի միթութիւնս նախընթաց հեղինակաց լուսաւորած է. որչափ կնճիռներ լուծածած և ենթագրութեան անէակ ծննդոց՝ իրական գոյութիւն գգեցուցած է. Արուեստական և բնածին բերոց ծնունդն և տեղիքը, զնոց անելն և

նուաղելն , հարկաց և մաքսից կրած փոփոխութիւնքն հանդերձ իբրենց պատճառներով , գրամոց և կշռոց և չափուց տեսակներ և գործածութիւնն առ այլ և այլ աղինս , զայս ամենայն արդարեն արժան էր ինձ ուսումնասիրել . բայց յօդուածս չի ներեր . ուստի ընթերցողաց թողով զայն ամենայն , ես Հայաստանի վերաբերեալ մասին մէջ միսցն կ'ամփոփեմ իմ տեսութիւնս :

Արդէն իսկ ծանօթ է մեզ՝ ի պատճեննէ , թէ անզստին ՚ի վաղ ժամանակաց՝ կային Արևելից վաճառականութեան նաւարկելի գծեր , որոնք կը կապէին զՊոնտացիս և զՀայս , Օքսոսի և կասպից ծովերեալ աղջարնա . կրթեանց հետ , որոնք այս ծովէն եւ լեռով կը բարձրանային յերասխ գետ , անտի ՚ի փասխ և ապա ՚ի Սեաւ ծով . և թէ Հեքիթաղաց և այլ սկիթական արշաւանաց պատճառաւ . Պարսիկը գոցեցին զայն . բայց յետոյ այլ և այլ պատճառներ յաջորդելով գարձեալ բացին : Սակայն հեղինակս աստ կարնոր իրողութիւն մի կը յայտնէ և կ'ապացուցանէ թէ Յուստինիանոս կայսեր ժամանակ երախսական հովուէն անցանող այդ գիծն ՚ի Փոքր Ասիտա տանելու համար , ձգուեցաւ յԱրտաշատ անդր , որուն կը հաղորդէր և իրան : Բիւզանդական աէրութիւնն պարսիկ արքայից արքային հետ յարմարցող որ զՄերտաշտ , զՄերին և զեալինիկոն ցուցընէ իրեն իրբն զլաւոր վաճառատեղի , յորս Պարսկաստանէ և կած բերքը պիտի վաճառուէին բիւզանդացոց : Այս շահաստաններէս առաջինը , կ'ընդունէր իր մէջ ՚ի Հնդկաց և ՚ի Պարսից արտադրուած մեապքը և զայլ վաճառս : Գրոկոպիսի վկայութիւնն իսկ և 410ին հրովարտակն կը ցուցընեն մեզ՝ թէ արդարէն Արտաշատ էր ոչ միայն իրքն միակ տեղի Պարսից հիւսիսակողման վաճառուց , այլ նոյն իսկ Հընդկաստանէն և ՚ի Պարսից եկած ազնիւ վաճառուց փոխանակութեան : Աստի մարթ է գուշակել թէ Արտաշատ այնպէս շուտով չթողաւ լքաւ՝ դունոյ

պայծառանալով , ինչպէս կը կարծուի , այլ նոյն իսկ վեցերորդ և եօթներորդ դարուն բարգաւաճ էր վաճառականութեամբ , թէ վերոյիշեալ վկայութեան պատմական նշանակութիւն տանք :

Ա . հատ . էջ 44 և 45 կը նկարագրէ վլրջն , զկրղի-ինումն զջրապիզոն իրբն հինաւուրց և կեդրոնական շահաստաններ ժ դարուն , յորս կը յաճախէին Հայ , Տաճիկ և Եղին վաճառականներ և վաճառք , բայց ՚ի մասնաւորի ճամկաւոր դիպակը , ըստ վկայութեան Մասուտեայ և Խոդայրի : Կարնոյ հնագոյն անուան հետ կը տեղեկացընէ զընթերցողս նաև այն քաղաքին և Արզնի վաղնջական արարուածոց :

Սակայն առաւել քան զառաջինս՝ փոքրիկ և աննշան Արտանուշի վրայ տուած տեղեկութիւնքն հետաքրրական են : Կոստանդին Փէրփեռառութենի ձորոի գետի վրայ յիշած քաղաքն՝ Արտանուշ էր՝ կը հաստատէ հեղինակս , և կ'ապացուցանէ թէ ժ դարուն ամենամեծ ամրոց և վաճառատեղին էր . հոն կը դիմէին հարաւային գծով Հայոց և Ասորես , իսկ հիւսիսէն իրերից , Ապագիոյ և Տրապիզոնի և կողքիսի բաղմաթիւ վաճառականները : Բայց թէ Գրուփոյ այս քաղաքս վերոյիշեալ աղերէն որուն կը վերաբերէր՝ այս որոշելու գտուար է . այսքան յայտնի է թէ մերթ բազրատունեաց և մերթ Վրաց իշխանաց մէջ մրցանաց ոսկեայ խնձոր մի էր :

Ուստիոյ և Սկանտինասիոյ Արարացոց հետ ըրած տուրեառութեան վրայ խօսելով (հատ . Ա . յէջ 59) կը յիշէ այդ ազգաց քաղաքներէն գուրս՝ նաև Սամանիստեաց և Խորասանու իշխանութեան շահաստաններ , Ամրղանդ , Բուխարա , Շօչ , Բահլ , Էնտէրապ և Խորասան յթ գարուն , սակայն այս ամենէն ալ աւելի Հայաստան (Մեծն) կը ներկայանայ մեղի , կ'ըսէ նաև , մասնաւորապէս Պարտաւի դահնեկանաց արարուածովէն որ ՚ի նահանդին Արանի : Այս մեծ ուշադրութեան և խորին հետազօտութեան արժանաւոր իրողութիւն մի

է. բայց կը ցաւինք որ հեղինակն իւր լոռութեամբ այն գահեկանաց դաշտ-նիբն անլուծանելի կը թողու : ի՞նչ կերպով արդեօք այդ արարական գահեկանները կը ներկայացրնեն զՀայս, արգեօք այն երկրի իշխանաց կամ շահաստանաց նշանագրոյնմերն իւրեանց վերայ բերելով, թէ Արարացւոց Մեծին Հայոց հետ ունեցած առևտրական գաշինքներն յայտնելով. այս բանս քննութեան կը կարօտի, և գուցէ կարելի լինի Պարտաւի գահեկանաց քննութեամբ՝ բազրատունեաց գահեկաններու պակասութեան խորհրդաւոր հանդոյցը լուծել:

Մի և նոյն հատորին 365-372 յէջս կը նկատէ զֆոքր Հայս՝ խաչակրաց վիճակաց հետ ունեցած մերձաւոր և բարեկամական յարաբերութեամբք : Ազգային նիւթոց ամփոփութեան համար, զրո գուցէ իւր նպատակէն օտար համարած է հեղինակ՝ կը ստիպէ զմեզ զիմել առ բազմագանձ Սիսուան Հ. Հեւոնդ Ալիշանի, յորում՝ իրեւ զշիթս անձրիւաց ընկղմին յովկիհան, սակայն իւր աւանդածներն իսկ ոչինչ ընդհատ լրջորէն քննուած, ճիշդ և ըստ ամեմենայնի մեր վստահութեան արժանաւոր իրեր են : Ըստ կարծեաց հեղինակիս, առաջին խաչակրաց գալստենէն քիչ առաջ Հայ ժողովրդեան մենց բազմորիւն մի արդէն իսկ գաղթեր էին եփրատայ վերին ափունքէն և կիլիկիոյ հիւսիսակողման լերանցը մէջ ամրացած էին Յունաց տիրապետութենէն վախինալով և իրենց ազգայնութիւնը պահպանելու նպատակաւ, որոնք շուտով յաջողցան իջնել և տարածուիլ նաև ի ստորին գտաւառ նորին և հուսկ կանգնել Ռուբրինեանց թագաւորութիւնը, մասսամբ միովն ճարտար վարչութեամբ, իսկ մեացածը՝ զինու զօրութեամբ : Հեղինակին զՀայս խաչակրաց գալստենէն քիչ առաջ գաղթել տալն ի կիլիկիս՝ Ռուբրինեանց մասին միայն համլնալու է . որովհետեւ Բաղունիք, Արծունիք, Հերմենեք, Նարանայէ լեանք, Ասկուսսեանք, Մոլեոնեանք

և Ապիհասսանք գարովիսկ առաջ հաստատութ էին անդ և կ'իշխէին առանձին դղեկաց : Յամին 970-990 այնքան բազմաթիւ էին Հայք 'ի կիլիկիս, մինչև Խաչիկ կաթողիկոս եպիսկոպոսութիւնս ևս հաստատեց 'ի Տարոն, 'ի Սելինոնդ և յշնտիոր և « յամենայն գաւառն յայնոսիկ », ըստ վկայութեան Ասորիայ : Խակ Այրիվանեցի ժամանակագիրն մեր կ'աւանդէ թէ 'ի սկիզբն ժարուն (900-910) « Արք յիսուն իշխանք Սաանցի նեղեալք 'ի թրքաց՝ գնացին 'ի կիլիկիս, և Աստուծով տիրեցին սակաւ սակաւ » : Սակայն ըստ իս, հաւանական է կարծել թէ մասն մի անդըստին 'ի Զ և յէ դարէ, որպէս և յաւուրց անտի և 'ի սերնդոց Հայկազունեաց և Արշակունեաց՝ հաստատեցան անդ և աճեցան : Վերոյիշեալ հայ ցեղերու ծագումն 'ի կիլիկիս՝ տակաւին խորհրդական հանգուցով մի ծրաբեալ կը համարի մեծանունն Հ. Ղեւոնդ Ալիշան . ուստի հարկ կը համարիմ հրաւերել զհմուտա ազգային պատմութեան, ուստումնամիբել զնոսին : — Գառնանք վերստին ունել զթել աւանդութեանց հեղինակին :

Նա խորհրդով իմն Փոքր Հայոց վաճառական յարաբերութեանց և այլ բարեմասնութեանց վերայ խօսելէն առաջ, անդէն և անդ մեր ուշագրութիւնը կը զարձենէ այն ամենայն բարեաց արժանաւոր հեղինակին, այն ինքն է մեր լեւոն Բ. վրայ, զոր և կ'անուանէ « Բարեկրաստ և յազողակ զինուրական, հիմնադիր և բազաւոր նորակառյօց բագարուրեան (1487-1491), կեդրոնական Ասիոյ քրիստութաւան ժողովրդոց հօգոր պատպան, գիտակ իւր անձնական բարեմասնութեան այլ և խիզախ և պերձ 'ի բարձրութեան իւրում մեծամեծաց առջև :

Արդ, համզուելու համար թէ հեղինակս արդարին լեւոնի լայնատարր սըրտին և Հայոց յայնժամու կացութեանն և արևմտեաց մերձենալու պատճառին խորը թափանցեր է, բաւական է անոր հետևեալ խօսքերը մէջ բերել.

և իւր հայլենակցաց բազմութիւնն ևս տեսնելով լեւոն՝ իմացաւ քաջ թէ ոչ այն ազդին փորձով տեսնուած քաջութիւնն և ոչ իսկ երկրին անմատոյց լեռները, որք զայն կը շրջապատէին կարող են յարատեւ և բաւականազօր պատուար լինել, ուստի անձին և յաշորդաց համար պէտք կը զդար սերտ մի ութիւն մի հաստատել արևմտեան տէրութեանց և Ասորիքի գաղթականութեանց հետ, այլազգի իշխանաց և միանգամայն թիւզանդական հայսերաց գէմ գնելու համար ։ Հեղինակին այս համառօտ՝ բայց ծանրակշիռ խօսքերը մենքիրք վճռական հերքում կը համարինք այն կարծեաց, որով յանախ կը մեղադրուին լեւոնեանք առ լատինս ունեցած մերձաւորութեան աղադաւ, թետ որոյ համառօտիւ կը բովանդակէ այս մեծ թագաւորիս մեծագործութիւնն և բարեկարգութիւններն, որով մուտ գտաւ արևմտեան վաճառականութիւնն 'ի թագաւորութեան փոքոն Հայոց և իւր զարգացման վերջին ծայրը վերամբարձաւ. Այս երկիրս, որ Աղքասանդրեկի ծոցին արևելեան եզերքէն կը համնէր մինչև Սադալիոյ խորշը, ամենէն աւելի դիպողագոյնն էր վաճառականութեան: Ո՛վքան մեծ, հարուստ և գեղեցիկ ներկայացուցած է զմեր փոքրիկն Հայակիլիկիա իւր խաղաղ նաւահանգստօք, յորս իրաւամբ բարձր 'ի գլուխ պանձացին յընթաց այնքան գարուց հոչակաւորքն Այսա, և կոռիկոս Յայնժաման. Տարսոնը կը նկարագրէ իրքն մի այլ քաղաքամայր ծովու, որոյ ալիքներն այս օրուան պէտ աւազուտ անապատի մէջ ամսյի թողած չէին զայն, այլ իւրեանց յարաժամ ծփանաց հետ՝ բազմութիւնս ևս բեռնաբարձ նաւուց ածէին և տանէին՝ բիւր բարօրութիւնս նմա աւետելով, կիւղնոս՝ որ այսօր աւազակուտով մը խցած է իւր աղբերակն և Գերասիկոնէի նման ընդ սանդարապեսս մնլրահետ կը թափառի, միջին դարուն նա ինքն ճեմն առեալ կարկաջասահ վտակգն իւրովք իբրու. յա-

ւերժհարսամբը Պոսիդոնի, այն քաղաքի միջէն կ'ընթանայր: Ասանա և Մոպսուեստ՝ նաւարկելի ուղիներով կը քալցնէին զվաճառս իւրեանց 'ի ծովանդը. իսկ Սիհան և Զահան՝ հասարակաց գետախտառնըրդով մը կու գային 'ի համբոյր միմեանց և իրենց կը հրաւիրէին զնաւու ազգաց:

Հայակիլիկիա՝ Ասորիքի և Փոքուն Ասիոյ մէջ ձեացած անկեան գաղաթը գտնուելով գոգցես իմն 'ի բնէ սահմանուած էր անթիւ կարաւաններու ևս անցք բանալ: Ցամաքային ուղի մը, կ'ըսէ հեղինակս, ձկուելով յԱսորիքէն յիկոնիոն և անտի 'ի կ. Պօլիս, որոյ հետ կը հաղորդէին աստի Եփրաւայ գծերն, իսկ անտի Արաբիոյ ուղի ները՝ կը Կտրէր զփոքը Հայս ամբողջ երկայնութեամբը: Իսկ 'ի Հալէպէ և յԱնտիոքէ Եկած կարաւաններն՝ Պէյլանայ կապանէն կ'ելքէին յԱղեքսանդրեակ: Այս քաղքէս քանի մի մղոն հեռի գէպ 'ի հիւսիս կը բացուէր Բորդէլլոյ (Դուռան), հայ մաքսից զլիաւոր տեղին, մարմարեայ մեծ այլի դրամք միով որոյ մացորդքն գեռ կը տեսնուին ցարդ, կը գոցէր բովանդակ կը Ծին անցքը, և անտի փախուստ տալն անկարելի էր: Այս պահակս որչափ որ օտարածնաց համար անձուկ և խիստ թուէր, նոյնչափ ևս Հայակիլիկիոյ թագաւորութեան գանձուց ընդարձակ մուտք կը բանար: Աստի կարեն ընթերցողք գուշակել՝ թէ որչափ միլիոն ոսկի կը տեղային ամ յամէ, երեակայելով մտօք անկէց անցնող վաճառուց և վաճառականաց աներեակայելի բազմութիւնն: Սակայն հայ հանճարն որպէս զի իւր բերքերն վագրաւաղին և արտագուստ եկածն իւր մէջ ծաւալէ, այս գոնէս մասնաւոր ուղի մը բացած էր գէպէ՛ի Մոպսուեստ, յԱստանայ, և այլն, որ Կիշիկ-Բօղագէն անցնելով կը Կտրէր Խորսոսի շղթաներն: Այս ճանապարհիս վրայ կը բարձրանայր իւր անմատոյց գղեկով մեծագործ ամրոցն իուկլակայ, որ Հայոց սահմանագլուխը կը պահ-

պանէր Թթքաց արշաւանքէն. ասս ևս մաքսատուն մի կար : Այսպէս ուրեմն այս և նախայիշեալ ուղիները կը ձգէին 'ի Հայո անբաւ քանակութիւնս և տեսակս վաճառուց, որոց մեծագոյն մասարն կու գայր 'ի կեդրոնական Ասիոյ : Հեղինակն կը տարակուսի որոշել արդեօք ասիհական եթէ տեղական վաճառուց համար աւելի կ'ընթանային աստ վաճառականք արևմտեաց . ասկայն որոշակի կը ցուցանէ թէ այս երկրիս մէջ շատ ծաղկած էր բամբակի մշակութիւնն և թէ նա առաջին տեսակ նիւթեր կը մատակարարէ վաճառականութեան : Փոքուն Հայաստանի բուրդն և այժմաղն ամէն կողմէն կը փնտուեէին, վերջինը իւր երկայնութեան և տոկունութեան համար՝ թանկագին գամելորներ (մազեղէն կերպասներ) յօրինելու կը ծառայէր : Մսիս՝ յատուկ կերպով բանուած մուշտակներ կը հանէր 'ի վաճառ . Տաւրոսի բովիրը զանազան մետաղներ կ'արտադրէին՝ յորս նշանաւոր էր երկաթն . Գահն կիլիկիոյ՝ իւր կոյս անտառներովն՝ առատ փայտ կը պատրաստէր 'ի վաճառ . իսկ դաշտայինն՝ ցորեն, գինի, չամիչ, և այլն . բաց 'ի սոցանէ մեծարդի էին յաշս ստարաց նաև ձիք և ջորիք Հայաստանի :

Ա. հա. յէջ 435, հեղինակն յիշէ յամին 1277 Միքայէլ Բայէլուոր կայսեր առ Վենետիկեան գալթականս շընորհած տեղինը ընդ որս էր և թեսաղոնիկէի Հայոց հին եկեղեցին : Այս բանիս պատճառը նա չի զուրցեր, բայց մեզ համար կարէ պատմական մեծ նշանակութիւն ունենալ ուստի և իրաւամբ հետեւեալ հարցերս է մեզ յարուցանել . արդեօք մինչև ուր կը հասնէր այդ և նման եկեղեցեաց հնութիւնն 'ի թեսաղոնիկէ . յորոց և բնչ պարագայից մէջ շնեցաւ . Հայք որ ժամանակամիջոցին սկսան հաստատուիլ աստ, և որքան էին . բնչ պատճառաւ Հայոց ձեռքէն հանուելով՝ վենետիկեցւոց տրուցաւ : Այս եկեղեցին՝ իմ կարծէքով՝ այն ժամանակէն 'ի վեր Հայոց կը պատկանէր, մանաւանդ թէ

այն հայազգի գաղթականները զինեցին, զոր Յուստինիանոս և անոր յանորդ հայազգարմ կայսերք աւերիչ քաղաքականութեամբ մի Հայաստանէն հանեցին զՀայո հետզհետէ բիւզանցական կայսրութեան Ամայի տեղերը բազմամարդ ընելու նպատակաւ : Ո՞գիւտէ, գեռ քանի քանի ուրիշ հրաշակերտներ ևս կանգնած չէ այդ օտար հողին վրայ բնակող տարաբախտ ժողովուրդն, որոնց միջյն մէջ հաւանօրէն թաղուեցաւ և լեւոնածինն վաղամեռուիկն թէֆանէ . յիրաւի, անոնք որ յընթաց երկու և կէս գարուց Արևմտեան կայսրութեան՝ շարք մի ինքնականեր և քաջ զօրապետներ ընծայեցին, կարելի՛ բան է որ բազմաթիւ և հոյակապ շէնքեր ևս շինած շինին . այս նշանակել ուզած է գողցես նոյն ինքն հեղինակն հիմն եկեղեցի կոչելով զայն : Խակ այն եկեղեցեաց Հայոցմէ վենետիկեցւոց անցնելուն պատճառն՝ երկու կարէ եղած լինել, ըստ իս. կամ այն է թէ կանխաւ 'ի թեսաղոնիկէ բնակող հայութիւնն Ռուբինեանց թագաւորութեան հաստատութենէն վերը լի կամաւ վերաբարձան 'ի կիլիկիա և կամ Եղնք հալածեցին զնոսա 'ի վրէժ. լինդուութիւն այնոցիկ՝ յորոց ինքեանք հալածուեցան, և այնուհետև մնաց անտերունջ այն եկեղեցին, և կամ 'յամին 1274 Անտիոքայ յոյն կտափմէոս Պատրիարքի թելադրութեամբ, որ զըժտելով ընդ լեւոնի գ' արկաւ 'ի բանտ և փախստեամբ անկաւ 'ի կ' Պօլիս, ըստ վկայութեան Գէորգայ Պախումերոսի՝ յոյն պատմագրի, և ամբաստանց զՀայո առաջի Միքայէլ կայսեր : Թէպէտ և այս ժամանակիս այս երկու ազգաց լաւ յարաբերութիւնք՝ Յունաց կողմանէ այնպիսի թշնամական գործ մի շնեն ներեր ենթագրել, բայց երկու գէպքն ևս նոյն կայսեր ժամանակ և իրարու մօտ կը հանդիպին : Սոյն այս հարցերս ևս մեր կողմէն առանձին ուսումնամիլութեան արժանի են : Երկրորդ հա. 73 իջէն ց92 էջ, նուրիած է փոքուն Հայաստանի, կոչելով

զնա և նախադուսն կեղրոնական Ա-
սիյո : Աստ հեղինակն իրքեւ հաւա-
տարիմ պատմի և խուզարիկու իրաց՝
հետևերով ժամանակաց ընթացքին՝ կը
ներկայացրնէ մեզ այս փոքր աշխարհն՝
և ազգութիւնն իրքեւ աշխարհավաձառ
մի Արևելից տուրեառութեան ընդ ա-
րևմտեալց : Նա իրաւամբ նախսպուռն
կոչած է . սակայն ես աւելի կ'ախոր-
ժիմ և կարծեմ թէ չեմ սինակիր՝ նկա-
տել զայն իրքեւ հարիրդունեայ ազատ
երկիր ընդ կեղրոնական Ասիա և ընդ
եւրոպա, որ ամէն կողմէն նաւարկելի
և ցամաքային ուղիներ կը ներկայա-
ցընէ . յոր և բազմութիւն այլաթզու և
քրիստոնեայ ժողովրդոց ոչ միայն ա-
զատ կ'ելլեն և կը մտնեն, այլ և յաշ-
խարհն հեռաւորս և 'ի մէջ սիներիմ
այլազգեաց մուտք կը գտնեն Հայոցթա-
գաւորաց յանձնարարական թղթովք
և կը պաշտպանուին : Քանի որ Անտիո-
քայ և Երուսաղեմի թագաւորութիւնն
ները կանգուն կային և անոնց յարա-
բերութիւնքն լաւ էին եղիպատոսի, և
Պարսկաստանի և Ասորիքի իշխողաց
հետ, աւելի Միջներկրականի և Հայակի-
լիկիոյ հարաւակողմէն ուղիներ կը ձե-
գուէին Արևելուայց վաճառականներն
յնսիա և յԱրքիրկէ տանելու համար .
սակայն յետ թշնամանալց և անկման
նոցա, մանաւանդ անկմանիր Աքքեայ,
քրիստոնեայ ժողովուրդը առ հասա-
րակ Քահանայապետաց մերթ յորդո-
րական և մերթ սպառնական կոնդակօք
ստիպեցան միայն քրիստոնեայ Հայաս-
տանի մէջ կեդրոնանալ, ուստի այս առ-
թիւ անոր հիւսիսային կողմէն ևս դեռ
ուրիշ ճանապարհներ բացուեցան՝ տա-
նել զնոսա մինչև 'ի խորս նորահաս-
տատ տէրութեան թաթարաց : Այս
ճանապարհաց մին ապա անցնելով
այժմեան Ռուսիոյ հարաւակողմէն՝ կը
կտրէր կ'անցնէր զիկեղրոնականն Ասիա
'ի Զինաստան հասնելու համար :

Ո՞վ կարծէր արդեօք թէ այն եր-
կիրն, որ դարերով առաջ հայկազնոյն
Արամայ և Արտաշեսի պէս յանկար-
ծած առ աշխարհակալաց և անոնց գո-

րաց առժամանակեայ թատր մի եղաւ,
նոյնն ապա ժամանակաւ անոնցմէ մնա-
ցած փոքրաթիւ սերընդեանն որորան
ևս պիտի լինէր և հայրենիք : Սակայն
վերնախնամ տեսչութիւնն՝ որ իրաց
յեղյեղուկ վիճակին հետ նոյնպէս և
զընթացս փոխէ ժամանակաց, ուզեց
որ այդ փոքրիկ և հալածական ժողո-
վուդն իւր բաղդին և անբաղդութեան
անուոց վրայէն հողովելով՝ աստ ուր ու-
րեմն դտնէ իւր ոտից կոռուանն և բար-
գաւաճի յօգուտ քրիստոնեայ ազգաց,
որոց ժամանակին և պարտգալք արդէն
իսկ ընդգէմ զինուած էին :

Այլ ամենայն զգալի կերպով կը
տեսնուին հեղինակին սոյն զինակար-
գութեան մէջ : Աստի մեր աշխարհաչէն
վեհապետաց վեհանձն արտօնութիւնն
ներ և Հայոց գործակցութիւնն, իսկ
անտի ծովահայեաց շահաստաններ, և
վարուն նաւահանգիստներ իրենց ծոցը
կը պատսպարէին Արևմտեայց վաճա-
ռականութեան նորախայծ ուժելու ցոր-
քան արեգակը կը լուսաւորէ երկիրս
և քանիցս կարդանք մարդկային ազ-
գի պատմութեան էները, զուգահետ
ընդ Տիւրոսի և Սիկոնի պիտի փայլին
Այասայ, Տարսոնի, Կոուիկոսի, Կոոա-
կեսիոնի (Ալյայա), Սաղակիայ և Ցորդոյ-
թափի փառքն և փայլը, 'ի յուշ ածելու
մեզ մեր շատահանճար նախնեաց պեր-
ճարար և սիդապանն ընթացքն 'ի նոսա,
և անոնց բաղդին յեղյեղուկ դրոշմը,
անոնց գարշապարի հետացը նման այն
աւալին փրայ, որոց մնացորդը կամ
իսպառ ծածկեալ կան այժմ և կամ
իրքեւ դոյլն ինչ նշխար հայկական
խառնուած են Հելլենաց և հելլենացե-
լց նախկին յիշատակարանաց հետ,
զորս օտարը անգամ հետ զիետէ որո-
ւնեն և 'ի լոյս ածեն մեզ : Այդ հայկա-
կան աշխարհի նշխարներէն մին համա-
րելու ենք և Բորդոյ-Բալի, որ ածանցի
'ի լատին բառէս ռալլում (սիւն կամցից),
որ բառ Գ. Հայոտի միշտ կանգուն կը
կենար այն նաւահանգստին մէջ, մեզ
անյայտ պատճառաւ մի : Ումանք 'ի լա-
տին մատենադրաց որ 'ի միջին գարս,

Բորդոյ-Բլաս կամ Պալօրայց ևս կը կոչեն։ Օտար հնչմանէն իսկ երեխ թէ յԱրևմտեայց դրուած ըլլայ այս անունա, ինչպէս ուրիշ շատ տեղեաց անունները։ Հաւանական է թէ Հայք ևս յա- առուկ անուամբ կոչէին զայն, բայց հա- ւանակագոյն կը թուի ինձ թէ Սպա- նիացիք կամ Գենուացիք և կամ վե- նետակեցիք հաստատած զարգացուցած լինին այս նաւահանգիստ։ Զահան գետաբերանին հիւսիս-արևմտակողմը կ'ինալ այն՝ իտալական 40 մղոնաչափ հեռաւորութեամբ։ Նօտարաց յամին 1274-1300 գործերով (տես Դիւ. Ա- րե. Լատ. Ընկերութեան. Ա. 451, 473, 474 և 475) կ'ապացուցանէ հեղինա- կը, թէ այս նաւահանգստիս մէջ կը յաճախէին գենուացուց և Բարցելոնա- ցուց վաճառաբերձ նաւերը, կ'ուզէն նա Բրոչար միայնակեցի միոյ 1330ին մէկ աւանդութեամբը հաստատել թէ այս նաւահանգստիս գործունեութեան ժա- մանակն՝ 1300էն անդին չի անցնիր. ո- րովհետեւ նա իւր ժամանակ իրուն նեղ և լիեւալ նաւահանգիստ մի կը նկարա- գրէ. սակայն մէկ և մէկ դարուց ծո- վային քարտերուն վրայ Բորդոյ-Բալիի անունը գեռ կը տեսէ։

Աւելի քան զայն՝ հնոյն Եգէայ աւե- րակներէն տասն մղոն հեռու դէպ 'ի հիւսիս-արևելք ուրիշ ամենայանաւոր տեղուոյ մը վրայ կը դարձընէ մեր ուշա- դրութիւնը, այսինքն է հաշակեալն 'ի դարուց և յազգաց Այսս, որոյ ճշշ- գրիտ փառաց և մեծութեան նկարա- գիրն արդէն իսկ ամառ առաջ ըրած է աշխարհածանօթն Հ. Ղեւոնդ Ռիշան իւր հսկայագործն կիլիկիոյ 357-397 էջերու մէջ, և անոր երջանիկ և տարա- բախտ օրերու արձագանգը դեռ կը հնչէ 'ի լսելիս մեր. սակայն ախորժելի է դարձեալ միշտ նորանոր լսել նաև օտարաց ձայնն և զրուատիքն, որք պի- տի շշադրին այս շահաստանաց շահաս- տանիս բազմագանձ յիշատակարան- ներն հետ զիետէ 'ի վեր հանել, դա- րուց 'ի դարս զայն անմահացընելու համար։

Դուստրս այս հինաւորց Եգէայ՝ հայ հանճարոյ նորագործ զօրութեամբ վերսաին կ'ելլէ կը կանգնի մեծա- պանձ փառքը և գեղեցկութեամբ իւր հեթանոսիկ մօր եօթնագարեան լոռւ- թեան և աճիւնացեալ աւերակացը մի- ջէն 'ի նոր կեանս և 'ի պարծանս քրիս- տոսագաւան տիկնութեան, խաչանիշ աղամանդով փայլեալ և շուրջ զիւրե- ունելով զպարս Հայակիլիկիոյ ծալկա- պասկ քաղաքաց։ Ապուլֆէտա իրա- ւամբ կը համարի զայն առաջին նա- շահանգիստ և հրապարակ վահառոց հին արևելեան ազգաց և արևմտեայց, վասն զի Պարսիկը և Հնդիկը, ծենքի իտալացիք, Սպանիացիք, Փուանիք, Ֆլա- մանկը և այլք, կ'ընթանան յաշխարհա- վաճառս այս, և ընդ ծով և ընդ ցամազ կը տանին և կը բերեն. հարիւր տարագը և հարիւրաւոր բարբառը կը լսուին անդանօր. ամենայն շարժման և զոր- ծունեութեան ճիշդ գաղափար մի կազ- մելն անկարելի է մեզ. Արդ ինչպէս ծովային և բազմազլիսնան հիդրա մը իւր սրտին բաղխիւնը, այսպէս ևս բո- լոր Միսուանայ թագաւորութիւնն իւր շըջակայ սահմաններով մեծապէս կը զգայր Այսաւայ շարժումն և անոր զօ- րել ազգեցութիւնն։ Բայց կը սիսակի արարացի մատենագիրս գնելով զըշ- խուհւոյ ծովու ծնունդն և բարերաս- տութիւնը խաչակրաց վիճակներու բո- լորական կործանման յաջորդող ժա- մանակի մէջ։ Պ. Հայտ այս սիսալս ուղ- ղելու աղագաւ կը բանայ իւր գիտու- թեան շտեմարաններն, և Մարկոյ Բօ- լցի վկայութեամբը՝ որ 20 տարի ա- ռաջ անկեց անցաւ և լեւոն բէ յամին 1271 գրուած պարզեազրի վկայու- թեամբ կը հաստատէ թէ այդ ժամա- նակէն շատ առաջ իսկ էր այն՝ մեծ շա- հաստան ամենայն տեսակ վաճառուց, բայց 'ի մամնաւորի շաքարի, մետաք- սի և ճամկաւոր և ոսկեզօծ դիպակաց։ Բաց աստի կայ և պարզեազրի մի Հեթ- մոյ տուեալ յամին 1261, զոր պար- տիմք Հ. Ղեւոնդ Ալիշանի, իրուն զիւր- իմն նորոգ և կարեսը, (կիլիկիա, էջ-

958). սոյն երկասիրութեան մէջ կը-
սուի թէ լեւոնի առաջին պարզևազրե-
րըն կը կրեն զթուական առաջնոյ ամի
ծդ դարու։

բնիլողդեայ համաձայն կ'աւանդէ
մեղ Պ. Հայո թէ Շամ և Բաղդատ ի-
րենց շալերով և հաղուաղիւտ վաճառ-
քով կը ծառայէին Այսասյ. բայց ֆո-
քուն Հայոց այս շահաստանն ամենէն
աւելի սերտ վերաբերութիւններ կա-
պած էր իւր երիցագոյն քեռ, այսինքն
է Հնոյն Հայաստանի Ստրպատական
նահանգի մայրստալաքին՝ Դավրէժի
հետ, որ արդէն ՚ի բազում ժամանա-
կաց հետէ Արքայից արքային կը ծա-
ռայէր իրու գերուհի մը։

Վենետիկեցւոց բարեկամական յա-
րաբերութիւնըն ընդհանրապէս լաւ
էին Հայակիլիկիոյ հետ. բայց ըստ պա-
հանչել հարկին և վասն հասարակաց
օգտի աշխարհին, Ախսուանայ առիւ-
ծափրան լեւոններ՝ ահազինս մենչէին
նաև վենետիկեան Հասարակապետու-
թեան առիւծին դէմ։ Յամին 1303 կամ
1304 մասնական՝ բայց բուռն կփր մի
ծագեցաւ այս երկու ազգաց մէջ՝ ի՞նա-
ւահանդասին Այսասյ, յորում Վե-
նետիկեցիք՝ Անդրէա Սանտուցոյ Պայլին
ձեռքբույլ յանակնկալս և ապօրինաւոր
յարձակմամբ տիրեցին նաւահանդըս-
տին վրայ տիրապետող ամրոցին և
Հայոց զինարանը յաւարի առին վասն
զի Հայոց թագաւորն 4% տուրք դրած
էր ներմուծուած ամենայն նիւթոց վը-
րայ։ Բայց հրովարտակի մը երիցս նո-
րոգելով՝ որ կ'արգելցը զմուտն վե-
նետիկեցւոց ՚ի Փոքր Հայո, վերջապէս
խոնարհեցաւ բարձրապանծնվենետիկ
և հարկադրուեցաւ հատուցանել այն
վնասն. դեսպանք իսկ դրկուեցան ի-
րենց հասարակապետութեան ցաւա-
կցութիւնն յայտնելու Հայոց արքու-
նեաց։

Սատի լաւ կը տեսնուի թէ Հայա-
կիլիկիա հիւանդ կամ տկար մարմին
մի չէր, յորմէ օտարք տղորուկի նման
արիւն ծծէին. այլ նա ինքն քաջ զի-
տէր իւր իմաստուն վարչութեամբ ա-

լենէն օգուտ քաղել։ Ես կը լոեմ. լսենք
թէ հեղինակն ինչ կը խորհրդածէ առ-
այս. « Թագաւորք Փոքուն Հայաստա-
նի ընդհանրապէս՝ բոլոր իրենց ուժովը
նպաստեցին վաճառականութեան զար-
գացման։ Կ'ախորդէին նորա տեսանել
զազդս և զազինս Արևմտից մրցել ընդ-
միմեանս իրենց երկրին մէջ տեղ մի
ունենալու համար։ Ընդհանուր քրիս-
տոնէութեան համակրութիւնն առ ին-
քեանս գրաւելն բաւական չէին համա-
րեր, այլ մանաւանդ այնախիս համա-
կրութեան յարակից տեսնել և իրենց
աշխարհի ներական շահեր։ Առանց
օգնութեան ծովային տէրութեանց Ա-
րևմտից՝ գժուարաւ պիտի կարենային
ընդդիմանալ իրենց թշնամեաց, յորս
ահաւորացոյնն էին Սուլդանք եղիպ-
տոսի, որք Հայոց վաճառականական յա-
ջողութեանցը նախանձընդդէմք՝ չէին
կրնար հաշտ ակամք հայել քրիստոսա-
դաւան այս փոքրիկ թագաւորութեան
վերայ, որ անկախ ամեննեին կը տոկայը
և կը տեսէլ ՚ի մէջ այնքան այլադեն
ժողովրդոց։ ուստի յաճախ անդամես
ուժգինս բաղիսեցին զնա։ Անուգոյ կը
համարի թէ կ'ուղէին Սուլդանք ասիա-
կան վաճառականութեան ամենամեծ
հոսանքը դարձնել իրենց յերկիրն։
Այս բանս կարելի էր. բայց հաւանե-
լի ևս է, թէ քաղաքային շահը ա-
ռաջն տեղին ունէր անոնց մոտաց մէջ,
այսինքն է, փոքրուն Հայոց թագաւորու-
թեան անկմամբը, այլ ևս Ասիոյ մէջ
անկիւն մի տեղ պիտի չմնայր, խաչա-
կիր զօրաց և անոնց գործ առնութեանն
ուից կուռան լինելու, եթէ գիպուտա-
ծով քրիստոնէութիւնն երկնէր ՚ի մտի
վերստին համահաւաքել իւր զօրու-
թիւնը՝ սուրբ երկիրն աղատելու հա-
մար։ Այս նպատակին համելու հա-
մար՝ յամին 1285 դաշինքով մէկ մի-
լիոն տիրելմ հարկ զրին Հայոց վերայ,
զոր յամին 1283ի դաշինքը՝ մէկ մի-
լիոն երկու հարիւր հազարի հասուց.
բաց աստի՛ Այսասյ և Բորգէլլայի ա-
զային և մաքային եկամտից կէսն ևս
կը պահանջէին։ Ուստի և թագաւորք

Հայոց յայսպիսի պարագայս ծանրացուցին օտարազգի վաճառականաց և վաճառուց տուրքերը բայց զգուշացան միանդամայն զալչելու այն դաշանց կամ պայմանագրոց, որը նուազեցընէին և կամ բառնային եկամտից իրաւունքները. մանաւանդ թէ շարունակեցին իսկ ընձեռել նոցա նորանոր պարգևագիրս, որով իրենց նորանոր շահոց գուռ կը բացուէր. և ասոնք էին իրենց գետերու և ծոցերու մէջ եղած անցուդարձի տուրքեր, իրենց նաւահանգըտաց մէջ խարսխաձդութեանց տուրք, բաժք և տուրք երթեեկութեան ճանապարհաց, միով բանիւ, հրապարակաց և վաճառատեղեաց տուրքեր»:

Հեղինակը կը խօսի նաև փոքրուն Հայաստանի մէջ հաստատուած բոլոր վաճառական ընկերութեանց և անոնց գործոցը վրայ, որք արդէն իսկ ծանօթեն: Սակայն Արևել. Լատ. Ընկերութեան Դիւանէն (Ա. 465, 488, 490 և 510) առնելով՝ կ'աւանդէ թէ 'ի թիւն նոցա էին Սիկնացրց և Անգոնացրց ընկերութիւններն, որք մեզի ցարդ անծանօթ էին. բայց կը ցաւինք որ ասոնց գործունէութեան ասսպարէզն կամ Այասի հետ ունեցած յարաբերութիւնը լուսութեամբ կ'անցնի: — Սակայն ես կարևոր կը համարիմ տեղեկացնել զընթերցողս հեղինակիս սոյն հատօրի Դ զիմոյն հետ, զոր նուիրած է Պարսկաստանի տուրեկառութեան:

Նախընթաց գլխով նա Պարսկաստանի վերաբերութիւնն Փոքրուն Հայոց հետ ցըցուց. իսկ աստ ընդհակառակին կը ներկայացընէ մեզ վերջնոյս յարաբերութիւնները Պարսից հետ: Բայսմ վաճառականականէն աւելի իւր աշխարհական տեսակետով հետաքրքրական է մեղ Փոքրն Հայաստան. ուստի հեղինակին հետ ես իսկ կը ցանկացի ընթերցողաց ուշագրութիւնն հրաւիրել յԱյսաէն 'ի Դավթէ տանող ճա-

նապարհին վրայ, որոյ և ընդարձակ նկարազիր մի թողուցեր է մեղ՝ իտալացի ճանապարհորդն թեկողդղի, բաղմաթիւ տեղեաց աղաւաղեալ և անծանօթ անուամբը: Այս ճանապարհագրութեան մասին զտուածինն հետաքրքրութեցան վիկոր Լանկուա¹ և եզուարդ Ֆիւլորիէ². բայց իրենց մասնաւոր պարունակին մէջ կիցած անոնց մի քանի հատոր ճանշան և նշանակեցին, զորս որոշելն հետոին բան էր: Ապա անդղիացի գիտնականն իւլ տեսութիւն մի գրեց սոյն մասին, որ բազմգր կը գերազանցէ քան զտուածինն: Եթե նորա՝ հմուտ աշխարհագիրն Քիւրերդ³, որոյ հետևեցան և պարզեցին քաջահմուտքն յիր և 'ի բան Հ. Ղեւոնդ Ալիշան (Կիլիկիա) և Գ. Հայտ իւր նախընթաց և սոյն այս հրատարակութեան մէջ:

Գ. Հայտ չորս գլխաւոր հանգույներու կը բաժնէ թեկողդղեայ ճանապարհագրութիւնն: Առաջին բաժնի մէջ կը յիշուին Այazzo, Colidara, Gandon, Cassena, Gavazera dell' Amiraglio, Gadue և Gavazera di casa Jacobi. Երկրորդին մէջ են Salvastro, Dudriaga, Greboco և Mughisar. Երրորդին մէջ են Arzinga, Gavazera sulla montagna, Ligurti, Ponte, Gavazera fuori d' Arzerone, և Bagni d' Arzerone. Իսկ չորրորդ բաժնի մէջ են Arzerone, Bagni d' Arzerone verso Torisi, Polorbeck, Sermessa calo, Aggia, Calacresti, Tre chiese, sotto Larcanol, Scaracanti, Locche, Piena di Falconieri, li Camuzoni, Piana del Fiume rosso, Condro, Sandoddi և Torisi.

Ajazzo է անտարակոյս աշխարհածանօթն Այսա: — Colidara է նոյն ընդմիոյ 'ի հնագոյն ամրոցացն Հայոց, այսինքն է ընդ կոպիտառ, զոր Մատթէոս Ուոհայեցի կոսիտառ կամ կաւսիտառ ևս կոչէ: Ասոր վրայ իշխեցին և իշխանք մեր կոստանդին որդին Ռուբենի և Պա-

3 Étude sur l'Itinéraire de l'Asie occid. de Pegolotti, par Kiepert, dans les Sitzungsberichte der philos. hist. cl. der Berliner Akad. 1881, p. 901.

1 Trésor des Chartes d'Arménie, introduction, page 97.

2 Recueil des histoires des Croisades, documents Arméniens, I. Introd. p. CI.

բոն Օցին : Բատ Հայտի՝ կը դտնուէր Տօրոսի շղթային այն մասին մէջ, որ կը սահմանէ զկիլիկիա 'ի հիւսիսյ : Հ. Ղեռնդ Ավիշան (կիլիկիա, Էջ 62 և 157) Փոխրդոյ արևելակողմը կը դնէ՝ ընդ մէջ Բարձրբերդոյ և Մոլեսնի, բայց տարակուսելով անոնց նյութեան վլրայ : — Gandon էր տեղի մի ուր թաթարաց խանի համար 20 սպիտակ (ազ-
պրե) տուրք կը վճարուէր . ասոր տեղը տակաւին ոչ ոք գիտաց որոշել ցարդ : Casena է կոկիսոնն Հայոց, զոր Խառ շակիրք Քոկոն, և Թուրքը՝ կէ գոսուն անուանէին : Այսէն հոս գալրւ համար արևմտեայց վաճառականները Զահան դետին հետ կ'երկըննային ցինապատ . աստ կը թողուն զգետն՝ անոր գետախառնուրդը՝ այսինքն է՝ Անապատ-սոռ հասնելու համար : Ուզին կ'անցանէր կապանի պարսպաց տակէն, ուր Գենուացիք տուրք կը վճարէին ամրոցին իշխեցողին՝ յամին 1204 ելած լեռն թէ Հրովարտակին համաձայն . և աստի կը ժամանէին 'ի կոկիսոն : — Հոս յիշուած կրիին Գավազեաներն ոչ այլ ինչ են, բայց եթէ կոկիսոնի և Սիւազի մէջ տեղփշած քէր վան-սարայը (կարաւանատունը) : Խակ Գաւու այս երկու հանգոյցներու մէջ տեղ աւան մի էր . կարէր, ըստ իս, նոյն ինքն կատէն լինել, զոր ընծայէ մեզ յամին 1248 Հուուլլայի աւետարանի մը նորագիւտ յիշատակարանը, զրեալ 'ի ձեռն Պետրոսի երիցու (տես կիլիկիա, Էջ 534) : — Salvastre է Նահինը Սեբաստիա : — Duodriga է այժմեան Տողուրկա կամ Թուտրակ զիւղը, Սեբաստիոյ հիւսիս-արևելակողմը, Ալիս գետահովտին վերին մասի մէջ : Պ. Խւէ կը համարէ թէ Ցիվրիկն եղած ըլլայ . յիրաւի, Երզինկայէ 'ի Ցիվրիկ կայր ուղի ինչ, բայց երկայն և գժուարանցանելի : Սեբաստիայէն մեկնելով Բեկողոդգեայ ճանապարհադրութեան ուղին կը ձգուէր յարևելս կոյս փոքր ինչ հակեալ 'ի հիւսիս : Այս ուղիս տանելով ցերպինկա կը հանդիպինք ներկայ քարտերու վրայ տեղւոյ մը, որ կը կուսի Մուշար կամ Մէշար . այս է հաւանօրէն բեկողոդգեայ յիշած Mughisar : — Greboco ըստ Քիրէլ-գեան և Պիցիկանեան (1367) քարտերուն, անկանէր լիբրաստից և Երզինկանի մէջ տեղ, և էր հաւանօրէն հանգոյցն Ազրրօզայ, զոր Հռովմէացիք Արաւաց (Արօրակ) կը յորջորդին : Երբորդ բաժնին Արցինան է ծանօթն երգնկայ . — Երկու կարաւանատներ, Եփրատայ վրայ ձգուած կամուրջն և աւան մի կը տեսնուին այժմ, ըստ Պ. Հայտի . բայց Ligurtiaյ տեղն որոշել ներկայ գիտութեամբ անկարելի է : — Bagni d'Arzerone, ըստ իս, Իլիհամ զիւղը պէտք է լինի ուր են ջերմուկք, Բեկողոդգեայ կամուրջն, ըստ Հայտի, Երզրումի մօտ պէտք է վընտառած լինի մօտ . այս կամրջին և Երզրումի մէջ տեղ երկու իջևաններ, մաքսատուն և չէնք մը կար, յորում էին լոգարան մի և մաքսատուն : Խսկ չորրորդ բաժնի մէջ յիշուած տեղերը, պէտք է Երզրումին 'ի Դավրէծ տանող ճանապարհին վրայ որոնել, ուր ճանապարհորդը նախ կը հանդիպէր Երզրումի արևելակողման աւանի միոյ, ուր էր և լոգարան և մաքսատուն . և ինն ժամու ընթացքէ մը վերջը կը հասնէր յիրասին 'ի տեղի ինչ որ Կայուէր Բոլորապահակ, այս ինքն է՛ կը բերդ . այս է ահա Բեկողոդգեայ Polorbech Կոյածն, Հ. Ղեռնդ Ավիշան (կիլիկիա, Էջ 368) թուի նոյն համարել զբոլորապահակն ընդ այժմու Հովուի կամրջին . բայց կարծեմ թէ պահակդ անուն ամրոց մի ևս լինել անդ 'ի հնումն նախակէ : Երասմէն ուղագուած դաշտին մօտ ուղևորը կը մանէր 'ի Երանցամէջա՝ Դէկիրաբայի կիրճ հասնելու համար . այս բարձրաւանդակաց վրայ կը գտնուէր՝ այժմու անկայտացեալ տեղին 'զոր Բեկողոդդի կուէ Sermessa calo . — Յետ անցանելց Ըղկիրճն Aggia, որոյ տեղին անծանօթ

է, ուղեորը կը գանէը Մուրաա գետի
բարձրութեանը վրայ, երկու իջևաւն-
ներ, որոնք այժմ՝ ծանօթ են, ուր կը
յաճախեն կարաւաննք. ասանց մին կը
կոչուի գարաքիլիսէ, այս է բեկողոդ-
դեայ Calacrestiն, և միւսն իշչ-քիլիսէ,
և այս՝ Tre chiese բաածն: Լանկրուա և
Տիւլորիէ Էլմիածինը կարծեցին, բայց
չէ ուղիղ: Հ. Դեւոնդ Ալիշան (Կի-
լիկիա, էջ 368) Բագրևաննիր կը հա-
մարի բեկողոդդեայ վերցիշեալ Տրե
չիեսէ կոչած վայրն: — Sotto Lan-
canone կը գտնուէր այժմու Ցիատին
քաղաքի շընակայ գագաթան մի վրայ,
ուստի կը տեսնուէր 'ի հարաւոյ մոնից
Մասիսի կատարն: — Փոքր ինչ հեռի
կու գար այժմեան քաղաքը Գարա-
քէնտ, և այս է բեկողոդդեայ Scaracanti
բաածն: Խսկ մնացած երեք անուանց
նշանակութիւնն և տեղն որոշել՝ գտուա-
րին է: Սակայն հեղինակը կը համարի
թէ էրզրումէն մեկնող միշնադարեան
կարաւանի ճամբան գոցցես իմն մի և
նոյն ուղղութեամբ կ'ընթանար ինչպէս
է այսօր: Այս բանիս ապացոյցն այս-
ինքն է՝ թէ բեկողոդդեայ յետագայ
անուանց մեկնութիւնը Fiume rosso,
այժմ 'ի Ցանկաց Գրլզլ-չայ կոչուած,
Երասխայ օժանդակ գետակն է, որ խոյ
քաղաքին պարիսպները կը թանայ:
Բայց Խոյայ հնութեան մասին՝ հակա-
ռակ կարծեաց Քիրէրդի՝ կը հաստատէ
թէ նոր քաղաք մի չէ, այլ միջին դա-
րուն արգէն կար, զոր լանձէկ իւր
տեղագրութեանց մէջ (Ա. գլ. էջ 610)
Сոյ կը գրէ. Քլաւիոյ Հոյ. Խսկ Ապուլ-
ֆետա Կհօաց. բայց թուի թէ այն
ժամանակ ճանապարհը քաղաքին քո-
վէն չէր անցներ. այդ պատճառաւ է որ
գետը միայն կը լիշտատակէ բեկողոդդի:
Condro և Sandottin կը գտնուէին 'ի Դավ-
րէժ տանող ուղղոյն վերջին ծայրը,
ուստի անցանէր Գրլզլ-չայն: Սակայն
խնդիր է թէ արդեօք Որմիայ լին ա-
ջակո՞մը թէ ներսաացոյն հողերուն վը-
րայ վինտուելու ենք անոնց տեղն. որով-
հետև մէկ կողմէն ուղին մի կայ ընդ մէջ
Խոյայ և Դավրէժի, որ կը հասնի մինչև

այդ ծովալիճը, միւս կողմէն ևս մի այլ
բանուկ ճամբայ կայ՝ որ այս երկու քա-
զաքներս իրարու հետ կը կապէ, ան-
ցանելով ընդ Մարտանէ և ընդ Սօփիան:
Քիրերդ առաջինը կ'ընդունի, վասն դի
հոն կը տեսնուի, կ'ըսէ, տակաւին հին
մաքսատուն մի Շանաւտան և Շանա-
ան զիւղերու մէջ: Սակայն դժուարին
կ'երկի ինձ համաձայնեցրնել այս վեր-
ջին անուանքս Condroի և Sandottinի
հետ, կը ցաւինք միանգամայն Պ. Հայ-
տի հետ, որ բեկողոդդի խոր լուութիւն
պահած է Փոքրուն Հայոց ստորին մասի
տեղեաց վրայ, յորոց անցանէր ու-
ղեորն:

Սոյն այս զիլսոյն մէջ կարէ գտնել ըն-
թերցողը միշնագարեան բաժից և մաք-
սից, տրոց և զրամոց վրայ կարևոր տե-
ղեկութիւններ: կարևոր են նոյնաէս
հեղինակիս սուր դիտողութիւնքը գե-
նուացի ասպետ Լանձէլէի Ճանապար-
հագրուքեան վրայ՝ Տրապիզոնէն 'ի
Դավրէժ: Իր լուսաբանէ նա հին ա-
նուանքը, կ'որոշէ այն ուղղոյն վրայ
գտնուող հանգոյցներն և բաղդատու-
թիւն կ'ընէ միշնագարեան գծերու՝ ընդ-
արգեայց: ●

Բարերդի, էրզրումի, Հասանդալէի
և Բայէղիսի հին դղեկաց և մարտկոց-
ներու նշանակն և նշմարքն հաւաքած
ժամանակ՝ որչափ որ (ըստ ժողովրդա-
կան անհիմն աւանդութեան) զանոնք
գենուացոց կը վերագրէ, սակայն ի-
րբե ուրոյն քննագատ՝ կարի իմաստու-
թեամբ իրզրումի անդղիական հիւպատ
Պ. Պրանդի կարծեաց դէմ կը մրցի, որ
պնդած է թէ իրզք անոնց շինութիւնը
գենուացոց և ոչ թէ Հայոց կը վերա-
բերի՝ որոց համար ծի և ժի գարուն
հրաման առին 'ի թագաւորաց Հայոց:
Բայց հեղինակն այս վրիպակ կարծիքն
եղծանելու համար այս վիաստս յառաջ
կը բերէ թէ ամենեին յիշտատակարան
մի չկայ 'ի հաստատութիւն Պրանդի
ենթադրութեան, և թէ ծի և ժի դա-
րբերուն Հայաստան արգէն իսկ Հայոց լի-
նելէն զադրած էր և թաթաթարք կ'իշխէին
ցՏրապիզոն եղած բոլոր երկիրներուն:

վեցերորդ գլխայն մէջ, զոր նուիրած է Պոնտոսի հիւսիսակողման քաղթաւ: կանութեանց, որոնց կերպոնատեղին և գործունէութիւնն էր կաֆա, կը յիշէ հեղինակս յանուանէ զբենուացիս, զիւսս, զայս և զբոյնս բայց լիգոր, րեան ընկերութեան գործոց (VI. 365) մէջ յիշուած կաֆայի հրապարփ մը վը կայութեամբ կը ցուցանէ թէ ամենէն աւելի բազմարիշ, տուրքասրիկ, հաշտարիմ և քաղաքին բարեկարդիչք էին Հայք: Յամին 1316 կ'երևի թէ մեծ ծագէս անձեցաւ անդ Հայազգի գաղթականաց թիւը, նորամուռ գաղթականութեամբ, վասն զի հեղինակը կ'ըսէ թէ հիւպատոսն (Գենուացւոց?) հըրամանընդունեցաւ տալ 'ի բնակութիւն Հայոց և տեղի ինչ ընդարձակ արտաքոյ պարսպաց: Եւ Օֆ. ցազ. թ. 407, 408, 380 վկայութեամբ գանձգի միոց դաշնադրութիւն ևս կը հաստատէ ընդ մէջ Եպիսկոպոսին Հայոց և հիպատոսին Գենուացւոց ջրամբարի մը համար զոր շնեցին Հայք: Տոհմային յիշատակակարանք 100 հազար տան կը հասցընեն Հայոց թիւն, և 1004 զիթիւ եկեղեցեաց: Սակայն այս չափազանցութիւն կ'երևի ինձ. ուստի և Անիէն գաղթող Հայոց աւանդութիւն մի համարելի է որ Բագրատունեաց մայրաքաղաքին բը նակաց և եկեղեցեաց թուոյն քան թէ կաֆայի կարէր համապատասխանել: Սակայն ամենէն բազմաթիւ լինելու

անժխտելի ճշմարտութիւն է. որոնք յամին 1330 ունեցան առանձին Նախարար, Պարոն և իշխան իսկ, Ֆունկէ հիսարէն գուրս կայր 'ի կաֆա նաև Հայոց թերդը 'ի ձև գոթացի՝ որց մի ծայրն էր գորշէ-գարք, ամրացեալ բարձր աշտարակօք, իսկ միւսն իսկէլ-գարք. և անոր կիսականգուն աւերակներն այժմ իսկ կեցած են, յորս էին և արձանագիրք Հայոց:

Արգարկ վերոյիշեալ տուչութենէն կը տեսնուի թէ բազմաթիւ և մեծամեծ շննութիւնն ըրբն Հայք 'ի քաղաքիս: Հեղինակն 12 եկեղեցիս միայն յիշէ առանց անուան, Գենուացի աղբիւրներէն հանելով: Սակայն ըստ վկայութեան Հ. Մինասայ Բժշկեան (Ճան. 'ի Լեհ. էջ 344) Հայք ունէին անդ 24 եկեղեցիս, յորոց նշանաւորքն էին Ս. Լուսաւորիչ, Ս. Սարգիս, Հրեշտակապետ, Աստուածածին, Ս. Յարութիւն, Ս. Քառասունք, Ս. Նիկողայոս, Ս. Յովհաննէս, Ս. Աննա, Ս. Ահարոն, վանք և առաջնորդարան յանոն Ս. Աստուածածնի. և շուրջ պարսպաւ էին՝ Ս. Մինաս, Ս. Սիմաւուն. Ս. Համբարձումն, Ս. Թորոս և Ս. Գէորգ: Այսպէս գտանի և ցանկ մի եափուկոպոսց: Սակայն յամին 1478 պաշարմամբ այս տիեզերահոչակ քաղաքուն կաւ թաթարաց խանին և Օսմանցոց ձեռք: Ապանուեցան բոլոր իշխանք Հայոց և 'ի կործան անկան պարտեալք:

Հ. Բարսեղ Սարգսոս

